



**<<ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>>
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

***ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ***

Ներդրումային ծրագրի անձնագիր

1. Ընդհանուր տեղեկատվություն Ծրագրի մասին

<<Գյումրու Էներկո Մատտեի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ին բժշկական տեխնիկական սարքավորումներով վերազինման և սպասարման որակի բարձրացմանն ուղղված ներդրումային ծրագիր

Գյումրու «Էներկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն գործում է Շիրակացի 13 հասցեում: <<Էներկո Մատտեի անվան պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որն իրականացնում է առողջության առաջնակի պահպանում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 24մլն դրամ, որը գոյացել է 10 հասարակ բաժնետոմսերի անվանական արժեքների (2.4 մլն դրամ) հանրագումարից: Բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության սեփական կապիտալը կազմել է 138.9մլն դրամ, որը նախորդ 2012 թ.-ի համեմատ աճել է 7.3մլն դրամով:

Բացի առողջության առաջնակի պահպանումից, պոլիկլինիկան իրականացնում է նաև նեղ մասնագիտական բուժօգնություն: Գործում են հետևյալ նեղ մասնագիտական կաբինետները.

- Վիրաբուժական/վնասվածքաբանական,
- Մաշկավեներաբանական,
- Սրտաբանական /ԷԿԳ/,
- Քիր-կոկորդ-ականջաբանական,
- Ֆթիզիատոր,
- Ակնաբույժ,
- Նյարդաբանական,
- Ինֆեկցիոն,
- Էնդոկրինոլոգիական,
- Սոնոգրաֆիա,
- Ռենտգենոգրաֆիա /ֆյուրոգրաֆիա/,

- Կլինիկական և բիոքիմիական լաբորատորիաներ:

Պոլիկլինիկայի կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը ներկայումս կազմում է մոտ 27550բնակիչ, որից 21295 մեծահասակ, 6255 մանկական:

Պոլիկլինիկայի զարգացման, մատուցվող բժշկական ծառայությունների ընդլայնման և որակի բարձրացման նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել առկա բաժնեհավաք կապիտալի ծավալները այլ աղբյուրներից ֆինանսական ռեսուրսների ներգրավման միջոցով:

Ներգրավված ներդրումային միջոցները ուղվելու են բացառապես բժշկական ախտորոշիչ սարքավորումների ձեռքբերմանը, ինչպիսիք են դուպլեքս տեսակի էխոսկոպիան (հագեցած դոպլերով, 4D նկարահանման հնարավորություններով, կարդիոպակետով, գինեկոլոգիական հետազոտությունների իրականացման հնարավորություններով), վիդեո գաստրոսկոպիան և կոլոնոսկոպիան, համակարգչային տոմոգրաֆիկ ախտորոշման բազմաշերտանի սարքավորումը, լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար նախատեսված սարքավորումները:

Պոլիկլինիկան հագեցած է 123.1մլն դրամին համարժեք սարքավորումներով, սակայն, առկա պայմաններում ընկերության զարգացման, շահույթի մաքսիմալացման, մրցունակության բարձրացման նկատառումներից ելնելով՝ կարևորվում է ներդրումային միջոցների հաշվին ընկերության կողմից ազգաբնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների տեսականու ավելացումը, որը միայն հնարավոր կլինի տեխնիկական վերազինման արդյունքում:

Իրականացվել է SWOT վերլուծություն՝ բացահայտելու համար ներդրումային ծրագրի թույլ և ուժեղ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները բացահայտելու համար /տես. աղյուսակ 1/:

Ի նկատի ունենալով, որ պոլիկլինիկան սպասարկում է մոտ 27.5 հազ. բնակչություն՝ կարելի է գնահատել առկա շուկան որպես ընդգրկուն, որի պահանջները բժշկական սպասարկման մասով օրեցօր ավելանում են: Ուստի շուկայում մրցակցային առավելություններ ապահովելու համար անհրաժեշտ է ներդնել նոր բժշկական ծառայություններ, որոնք կապահովեն տեղի պահանջները և բնակչության արտահոսք չի գրանցվի դեպի մայրաքաղաքային բժշկական հաստատություններ:

Ներդրումային փաթեթի SWOT վերլուծություն

Աղյուսակ 1.

	Ուժեղ	Թույլ
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> • Սարքավորում, • Շահադրման բարձրացում, • Ծառայությունների ընդլայնում, • Շահույթի մաքսիմալացում 	<ul style="list-style-type: none"> • Պահանջարկի ավելացման արդյունքում բուժ. անձնակազմի ոչ համապատասխանություն,
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> • Շուկայի ընդլայնում, • Օրենսդրական փոփոխություններ. 	<ul style="list-style-type: none"> • Բնակչության գնողունակության ցածր մակարդակ

ՀՀ Շիրակի մարզում առկա են շատ քիչ թվով բժշկական հաստատություններ, որոնք հագեցած են արդի բժշկական սարքավորումներով, որը հանգեցնում է թիրախային շուկայի արտահոսքի: Ուստի, համապատասխան տեխնոլոգիական ներդրումների իրականացման արդյունքում հնարավոր է բավարարել ոչ միայն դրանց նկատմամբ առկա պահանջմունքները, այլև կարելի է բարձրացնել ընկերության շահութաբերության մակարդակը:

Կատարված ներդրումային փաթեթի հետզնումը ներդրողի կողմից իրականացվելու է ներդրումային պայմանագրի համաձայն, որի համար նվազագույն ժամկետ կարող է հանդիսանալ 10 տարին:

Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 130 մլն դրամ, որը ներգրավելու համար <<<< Բաժնետիրական ընկերությունների մասին >> ՀՀ օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածներով /ՀՕ-232, 25.09.2001թ./ սահմանված կարգով կիրականացվի ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում և կթողարկվեն նոր բաժնետոմսեր: Ներգրավված միջոցները ամբողջությամբ կուղղվեն ընկերության տեխնիկապես վերազինմանն ու նոր ծառայությունների ներդրմանը:

2. Ընդհանուր տեղեկատվություն Ծրագրի հեղինակի մասին

<<ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>>
 ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

3. Արտադրանքի/ծառայության ընդհանուր նկարագիրը (շուկայի նկարագիրը)

Ներդրումային փաթեթի իրացման արդյունքում նախատեսվում է պոլիկլինիկայում ավելացնել բժշկական ծառայությունների տեսականին: Պոլիկլինիկայի կողմից կմատուցվեն այնպիսի արդիական ծառայություններ, ինչպիսիք են էխոսկոպիկ ծառայությունների համակարգը, գաստրոսկոպիկ և կոլոնոսկոպիկ հետազոտությունները, տարբեր հատվածների համակարգչային տոմոգրաֆիկ ախտորոշումը, կլինիկական, իմունոլոգիական, բիոքիմիական լաբորատոր հետազոտությունները: Նման հետազոտությունների անցկացման համար ընկերությունը պարտավորվում է ձեռք բերել համապատասխան բժշկական լիցենզիաներ և կազմակերպել լիցենզավորված գործունեություն:

Ախտորոշիչ հետազոտությունները հիմք են հանդիսանում հիվանդության կանխատեսման և բացահայտման համար, այսինքն՝ հիվանդի մուտքը բժշկական հաստատություն ուղեկցվում է ախտորոշիչ հետազոտություններով: Նմանատիպ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ է համապատասխան տեխնիկապես հագեցվածության ապահովում:

Թիրախային տարածաշրջանում, որը ընդգրկում է ողջ Շիրակի մարզը, ներկայումս նման կարգի ծառայություններ մատուցվում են ընդամենը երկու ընկերության կողմից, որոնք են «Ա/Ձ Մարատ Ստեփանյան» լաբորատոր-տոմոգրաֆիկ ախտորոշիչ կենտրոնը և «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ: Հաճախ նշված երկու հաստատությունների գերհագեցվածության պատճառով հիվանդները ախտորոշիչ հետազոտություն անցնելու համար դիմում են մայրաքաղաքային բժշկական կենտրոններ:

Այստեղ են ներգրավված ՀՀ-ում բարձր հեղինակություն ունեցող Շիրակի մարզի լավագույն ռադիոլոգը, գաստրոէնտերոլոգը, իմունոլոգը: Վերջինս լուրջ մրցակցային առավելություն է հանդիսանում ընկերության համար:

«Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն ապահովում է պետության կողմից երշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պետական պատվերների իրականացումը: Նման համագործակցությունը պահպանվելու է նաև հետագայում, որի արդյունքում կավելանա պետական պատվերների քանակությունը պայմանավորված

պոլիկլինիկայի կողմից ներդրված նոր ծառայություններով: Պետական պատվերի շրջանակում ՀՀ-ում ախտորոշիչ հետազոտությունները իրականացվում են հիվանդներին պոլիկլինիկաներից ուղեգրման միջոցով և քանի որ Շիրակի մարզում ոչ մի պոլիկլինիկա հագեցած չէ համապատասխան սարքավորումներով, ներքին ուղեգրումների փոխարեն հիվանդները ուղեգրվում են այլ բժշկական հաստատություններ, որի արդյունքում արտահոսք է տեղի ունենում: Ներդրումային ծրագրի ներդրման արդյունքում հնարավոր կլինի թիրախային շուկայի մասնակիցներին տրամադրել բարձրակարգ բժշկական սպասարկում:

Թիրախային շուկա է համարվում Շիրակի մարզի բնակչությունը: Ներկայումս առողջության առաջնային պահպանման ծրագրի շրջանակում պոլիկլինիկան պայմանագրային հիմունքներով աշխատում է 27550 հազ. մարդու հետ: Սակայն, նախատեսվում է չսահմանափակվել այս շուկայով և ձեռք բերել շուկայի առավել մեծ հատված: Համապատասխան ծառայությունների ներդրման արդյունքում ազգաբնակչության և պոլիկլինիկայի միջև համագործակցությունը կընդլայնվի, որը կհանգեցնի ոչ միայն վճարովի ծառայությունների ավելացմանը, այլև պետական պատվերների ծավալների մեծացմանը: Ակնկալվում է գրավել առկա շուկայի ավելի քան 1/3-ը:

Ընկերության համար թիրախ է հանդիսանում տեղի շուկան, մասնավորապես Շիրակի մարզը, ինչը չի նախատեսում նշված ծառայության արտահանում, դրա անհնարինության և ոչ նպատակահարմարության պատճառով:

4. Ծրագրի ֆինանսատնտեսական ցուցանիշները

Ներդրումային ծրագրի արդյունավետության գնահատման համար հիմք է հանդիսանում ընկերության ներկա ֆինանսատնտեսական վիճակը: Նախ նշենք, որ 2013 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության հաշվեկշռային արժեքը կազմել է 140.4 մլն դրամ, որի կազմում սեփական միոցները կազմել են 98%: 2013 թ.-ի ընթացքում ընկերության կողմից իրականացված աշխատանքների, մատուցված բժշկական ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 134.9 մլն դրամ:

Հիմնվելով արդեն իսկ առկա կայուն հիմքի վրա՝ ներդրումային նախագծի իրականացումը կապահովի բարձր արդյունավետություն: Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 130 մլն.դրամ, որն ամբողջությամբ կկապիտալացվի:

Ներգրավվող և սեփական միջոցների հարաբերակցության գործակիցը կկազմի 1.9:

Ծրագրի ներդրումից և տեխնիկապես վերազինումից հետո նախատեսվում է ապահովել 43.6մլն. դրամ տարեկան հասույթի ավելացում՝ պայմանավորված ներդրված սարքավորումների հիման վրա մատուցվող բժշկական ծառայություններով, որտեղից ամորտիզացիոն ֆոնդին կհատկացվի մոտ 13մլն դրամ:

Ծրագրի հետգնման ժամկետը սահմանվում է նվազագույնը 10 տարի: Նշենք նաև, որ ըստ ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության ձեռք բերվող հիմնական միջոցների օգտակար օգտագործման ժամկետը նույնպես սահմանվում է 10 տարի, որի արդյունքում կապահովվի ներդրումների ոչ դիսկոնտավորված մասի հետգնումը (130մլն. դրամ): Իսկ դիսկոնտավորման արդյունքում ստացված տարբերությունը ընկերությունը կվճարի շահույթից շահաբաժինների տեսքով:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքը, վերը նշված ներդրումների դիսկոնտավորված մեծությունը տվյալ պահի գնահատման արդյունքներով կկազմի 261.7մլն դրամ:

$$FV = C_0 \times (1 + r)^n = 130 \text{ մլն դրամ} \times (1 + 0.0725)^{10} = 261.7 \text{ մլն դրամ}$$

Ներդրումների եկամտաբերության ինդեքսը կկազմի՝

$$PI = \frac{\sum_{i=1}^N \frac{MCF_i}{(1+r)^i}}{Inv}$$

Որտեղ՝ PI-ն ներդրումների եկամտաբերության ինդեքսն է,

INV-ն ներդրումների ապագա արժեքն է,

r-ը դիսկոնտավորման տոկոսադրույքն է:

Մեր ներդրումային ծրագրի համար հաշվարկված եկամտաբերության ինդեքսը կկազմի $PI=1.15>1$, ինչը վկայում է, որ մեր կողմից առաջարկվող ծրագրում ներդրումներ իրականացնելը հեռանկարային է և արդյունավետ:

Հիմնական ռիսկերը, որոնք կարող են սպառնալիք հանդիսանալ ընկերության բնականոն գործունեության համար ունեն արտաքին բնույթ: Այդպիսիք են արտարժույթի ռիսկը, եթե ներդրումը իրականացված է այլ փոխարժեքով, քաղաքական ռիսկը, օրենսդրական փոփոխություններով պայմանավորված ռիսկը: Նշենք, որ արտարժույթային ռիսկը կարելի է ապահովագրել արժեթղթերի

երկրորդային շուկայում: Իսկ քաղաքական և օրենսդրական դիսկի կանխարգելումը կիրականացվի Հայաստանի Հանրապետության կողմից, ով ստեղծում է նախապայմաններ ապահով ներդրումային միջավայր ապահովելու համար: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունն աչքի է ընկնում կայուն բանկային համակարգով, սոցիալական կայունությամբ: Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը ձևավորվել և իրականացվում է ազատական սկզբունքների հիման վրա և նպատակաուղղված է Հայաստանի ինտեգրացմանը համաշխարհային տնտեսության մեջ:

<<Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի համար իր գործունեության ողջ ընթացքում հարկային արտոնություններ չեն սահմանվել, որը պայմանավորված է եղել ընկերության կայուն աշխատելաճով:

5. Առաջարկ ներդրողին

Հայաստանի Հանրապետության ֆոնդային բորսան հիմնավոր քայլեր է անում կայունության ապահովման և զարգացման համար, ինչը որոշ ժամանակ հետո հնարավորություն կտա մրցունակ բաժնետոմսերի եկամտաբերության մակարդակը որոշել համաձայն շուկայում հաստատված կուրսի: Վերջինս հնարավորություն է տալիս ներդրումների վերադարձի իրականացում բաժնետոմսերի վաճառքի շնորհիվ:

Ինչպես նշվեց, ներդրումների պահանջվող ծավալը կազմում է 130մլն դրամ, որի հավաքագրման համար կթողարկվի 20 սովորական բաժնետոմս 6.5մլն դրամով: Նշենք որ, տեղի կունենա համաձայնեցում արդեն իսկ առկա բաժնետոմսերի կազմում, դրանք հետ կվերդարձվեն և նորից կգնվեն, բայց այս անգամ կթողարկվի 10 բաժնետոմս 6.5մլն դրամով: Այլ կերպ ասված, ներդրումային փաթեթը կկազմի ընդհանուր կանոնադրական կապիտալի 68.99%-ը, որի արդյունքում վերահսկիչ փաթեթը կպատկանի ներդրողին, ով կներդնի 130մլն դրամին համարժեք գումար: Շահույթի՝ բաժնետոմսերին ուղղվող գումարը կորոշի բաժնետերերի ընդհանուր ժողովը:

6. Տեղեկատվություն Ծրագրի անձնագրի մասին

*Ծրագրի անձնագիրը կազմվել է 12.06.2014թ.-ին
Տվյալ պահի դրությամբ ըստ ՀՀ ԿԲ-ի գործող փոխարժեքներն են՝*

▼ Փոխարժեք		12/06/2014	⚙
USD	1	411.75	▲ 0.08
GBP	1	692.60	▲ 1.61
EUR	1	556.69	▼ -0.34
RUB	1	11.98	
☑ Չեխոսլովակիական արժեք			
☑ Չեխոսլովակի կառուց			

7. Կոնտակտներ

<<Էնրիկո Մատտեի անվան պելիկլինիկա>> ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Ադամյան
enricomatte@mail.ru
 Հեռ.՝ +37431233871

8. Ծրագրի անձնագիրը հրապարակելու համաձայնություն

Համաձայն եմ / Համաձայն չեմ